Բ. Մ. ԹՈՒՂԼԱՃՅԱՆ (Ստամբուլ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐՈՒ ՆՊԱՍՏԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻՆ

Թանզիմաթի բերած կարգ մը նորություններու և բարեկարգություններու շնորհիվ Օսմանյան կայսրության սահմաններուն մեջ ապրող ոչ իսլամ հայրենակիցներու որոշ չափով հավասար իրավունքներ տրվեցան։ Հայերը կարողացան այս իրավունքները լավագույնս օգտագործել։ Անոնք զարկ տվին թե՛ իրենց մշակութային գործունեությանց և թե՛ մեծապես սատարեցին երկրի մշակութային և տնտեսական վերելքին։

Ըստ պատմական տվյալներու, օսմանյան հպատակ հայերը թուրքերեն շատ ավելի առաջ Արևմուտքի հետ հարաբերության մեջ մտնելու հնարավորությունը ունեցեր էին։

Հայերու մոտ հասարակական և կրթական մտքի զարգացումը թանզիմաթի հռչակումեն առաջ որոշ մակարդակի հասած էր արդեն։ Արդարև, անոնք ի մասնավորի հիմնած ըլլալով իրենց տպարանները, ուսումնարաններն ու կրթական ընկերությունները, հասցված ըլլալով մտավորական ընտրանի սերունդ մը, հաջողած էին իրենց մեջ հասարակական ու մշակութային բարեկարգության գաղափարը տարածել։ Հետևաբար հայերն արդեն վաղուց նախապատրաստված էին հետագային պետականորեն մշակված և «Թանզիմաթը հայրիկ» կոչված բարեկարգության մը ծրագրի իրականացման գործին։

Իրոք ա, և՛ թանզիմաթի շրջանին (1839—1870 թթ.), և՛ հետագա շրջաններուն հայերը մեծ ավանդ ներդրեցին երկրի քաղաքակրթական գործին։ Պետք է անպայման նշել, թե հայերն էին, որ նախ ստեղծեցին իրենց ազգային սահմանադրությունը և ապա նպաստեցին 1876 թվականի Օսմանյան պետության առաջին սահմանադրության ծնունդին։

1863 թ. հայոց ազգային սահմանադրությունը, որ կը կոչվեր «Նիզամնամէի Միլլեթի էրմենիան», կազմված էր դեմոկրատական հաս-